



*Շրջակա միջավայրի նախարարության
«Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ*

ԱԳՐՈՏԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

2024


Օգոստոսի երրորդ տասնօրյակ

Տեղեկագիրը կազմել է ագրոոդերևութաբանության բաժինը՝ մասնագիտացված ագրոոդերևութաբանական կայաններից ստացված տեղեկատվության հիման վրա:

Տեղեկագրի պատասխանատու՝ տնօրենի տեղակալ Գ. Մուրենյան

ՀԻՄՆԱԿԱՆ ՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ


Օգոստոսի երրորդ փասնօրյակում օդի միջին ջերմաստիճանը հանրապետության շրջանների զգալի մասում բարձ է եղել նորմայից 1-2, առանձին շրջաններում՝ 3 աստիճանով:



Տասնօրյակի ամենաբարձր ջերմաստիճանները դիտվել են օգոստոսի 22-24-ն ընկած ժամանակահատվածում. Տավուշում գրանցվել է +33...+36°C), Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ +29...+31°C, նախալեռնային շրջաններում՝ +37...+39°C, Սյունիքի հովտային շրջաններում՝ +37...+39°C, նախալեռնային շրջաններում՝ +29...+31°C, Շիրակում՝ +30...+34°C, Կոտայքի լեռնային շրջաններում՝ +28...+32°C, նախալեռնային շրջաններում՝ +33...+35°C, Գեղարքունիքում՝ +25...+30°C, Լոռիում՝ +29...+34°C, Արմավիրում, Արարատում՝ +37...+39°C, Արագածոտնի լեռնային շրջաններում՝ +27...+29°C, նախալեռներում՝ +32...+37°C:


Տասնօրյակի ամենացածր ջերմաստիճանները դիտվել են օգոստոսի 29-ին. Տավուշում գրանցվել է +15...+17°C, (Դիլիջան՝ +10°C), Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ +7...+9°C, նախալեռնային շրջաններում՝ +16...+18°C, Սյունիքի հովտային շրջաններում՝ +16...+21°C, նախալեռնային շրջաններում՝ +7...+11°C, Շիրակում՝ +11...+13°C (Աշոցք՝ +7°C), Կոտայքի լեռնային շրջաններում՝ +10...+12°C (Հանքավան՝ +6°C), նախալեռնային շրջաններում՝ +15...+17°C, Գեղարքունիքում՝ +8...+13°C (Գավառ՝ +7°C), Լոռիում՝ +8...+13°C, Արմավիրում, Արարատում՝ +15...+20°C, Արագածոտնի լեռնային շրջաններում՝ +6...+8°C, նախալեռներում՝ +14...+18°C:

Տասնօրյակային տեղումներ












Տասնօրյակային տեղումների գումարային քանակը Շիրակում կազմել է 8-22մմ (9-186%), Լոռիում՝ 11-23մմ (75-138%), Տավուշում՝ 11-20մմ (53-159%), Արագածոտնի լեռնային շրջաններում՝ 1-15մմ (6-74%), նախալեռներում՝ (Աշտարակ 1մմ-19%), Գեղարքունիքում՝ 8-29մմ (56-232%), Կոտայքի լեռնային շրջաններում՝ 9-18մմ (81-164%), նախալեռնային շրջաններում՝ 1մմ (23%), Արմավիրում՝ 1-14մմ (32-424%), Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ 5մմ (44%), նախալեռնային շրջաններում՝ 4մմ (174%), Սյունիքի նախալեռնային շրջաններում՝ 4-10մմ (22-154%), հովտային շրջաններում տասնօրյակի ընթացքում տեղումներ չեն դիտվել:

Հողի մակերևույթի նվազագույն ջերմաստիճանը



Հողի մակերևույթի նվազագույն ջերմաստիճանները գրանցվել են տասնօրյակի երկրորդ կեսին. լեռնային շրջաններում՝ +5...+10°C, Արարատյան դաշտում, Արագածոտնի նախալեռներում, Տավուշի և Սյունիքի հովտային շրջաններում՝ +13...+17°C:

Վեգետացիոն ինդեքսի ընթացիկ ընթացքն անցյալ տարվա և բազմամյա միջինի համեմատ



Գյուղատնտեսական մշակաբույսերի աճն ու զարգացումը

Տասնօրյակի ընթացքում հանրապետությունում շարունակվել է պտղաբույսերի, խաղողի, բանջարանոցային մշակաբույսերի, եգիպտացորենի, կարտոֆիլի, կաղամբի բերքահավաքը, խոտհունձը:

Եղանակային պայմանները նպաստավոր են եղել պտղաբույսերի հասունացման, շաքարանյութի կուտակման և մասսայական բերքահավաքի համար:

Լեռնային շրջաններում շարունակվել է աշնանացան ցորենի նախացանքի, տեղ-տեղ՝ ցանքի աշխատանքները: Դիտված տեղումները բարձրացրել են հողի խոնավության պաշարները՝ բարելավվելով նախացանքի, ցանքի, հատիկի աճի և զարգացման պայմանները:



